«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

# Ավարտական հետազոտական աշխատանք

***Թեմա*** ՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում

***Հաստատություն*** ՝ *Սասունիկի թիվ 7 մանկապարտեզ*

***Դաստիարակ*** ՝ Օֆելյա Գասպարյան

**Ղեկավար՝** Ժաննա Ավետիսյան

2023թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….3

**Գլուխ 1.** Գեղագիտական դաստիարակության դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքում: Կերպարվեստային գործունեություն……4

1.1 Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները……4

1.2 Կերպարվեստային գործունեության առանձնահատկությունները……..9

**Գլուխ 2.** Ոչ ավանդական նկարչության նշանակությունն ու նպատակը……...12

2.1 Ինչ է իրենից ներկայացնում ոչ ավանդական նկարչությունը…….12

2.2 Ոչ ավանդական նկարչության տեսակները……....13

2.3 Մատնանկարչություն……..15

2.4 Հարթաքանդակային նկարչություն……...18

2.5 Ոչ հարթ մակերեսով նկարչություն……..19

2.5 Խաղ-զվարճալիքներ……21

Եզրակացություն……23

Գրականության ցանկ……26

# Ներածություն

«Կերպարվեստը», որպես նախադպրոցական հաստատության ուսումնական առարկա ունի ամենակարևոր դերը երեխաների համընդհանուր դաստիարակության գործում:

Կերպարվեստային պարապմունքների ժամանակ գործնական կարողությունների և գեղարվեստական ընկալման հմտությունների ընթացքում երեխաների մեջ զարգանում են հետաքրքրությունները արվեստի ստեղծագործությունների, ինչպես նաև շրջապատի նկատմամբ, ընդունակ լինելու իրական կյանքում և արվեստում գոյություն ունեցող գեղեցիկը նկատելու և գնահատելու համար: Մանկական ստեղծագործությունների միջոցով բացահայտվում են յուրաքանչյուր երեախայի ներաշխարհը, ընդունակությունները, պատկերացումներն ու հետաքրքրությունները:

Երեխայի համար նկարչությունը նույնքան բնական ցանկություն է, որքան խաղը: Երեխան նկարելով խաղում է և խաղալով նկարում: Գոյություն ունեն նկարչության տեսակներ, որոնք կարող են հետաքրքրություն առաջացնել երեխաների մեջ: Այդ տեսակներից հատկապես հատկանշական է ոչ ավանդական՝ այլընտրանքային նկարչությունը:

Ես՝ լինելով նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակ, նկարչության պարապմունքին մշտապես կիրառել եմ ավանդական նկարչական մեթոդները: Երեխաների հետ աշխատել ենք հիմնականում մատիտով և վրձնով: Սակայն կիրառելի են նաև ոչ ավանդական նկարչության ձևերը, որտեղ երեխաները նկարում են մատիկներով և ձեռքերով, կամ այլընտրանքային, կենցաղային առարկաներով:

Ոչ ավանդական նկարչությունը տարբերվում է մեզ ծանոթ նկարչության ձևերից: Վառ երևակայության շնորհիվ կարող են ծնվել մի շարք ոչ ավանդական նկարչության ձևեր:

Վերոհիշյալ թեման արդիական է, քանի որ ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է, սաների մեջ ինքնուրույնություն և ստեղծագործական ունակություններ ձևավորելու և զարգացնելու համար:

# Գլուխ 1. Գեղագիտական դաստիարակության դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքում: Կերպարվեստային գործունեություն

## 1.1 Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները

Գեղագիտական դաստիարակությունը սկսվում է նախադպրոցական տարիքից՝ իր առջև խնդիր դնելով ակտիվացնել երեխաների շփումը արվեստի հետ, որի գեղեցկությունը կարող է հասկանալ նաև նախադպրոցական տարիքի երեխան:

Այն ենթադրում է՝ երեխայի ընկալման, երևակայության, հետաքրքրությունների, զգացմունքների, ունակությունների և հակումների զարգացում, հիշողության ձևավորում: Երեխան ընկալում է աշխարհը տպավորությունների և կերպարների միջոցով: Հուզական տպավորությունները և ապրումները խոր հետք են թողնում երեխայի կյանքում և դրանք հետագայում երբեք չեն մոռացվում: Մանկության շրջանում հուզական ներդաշնակությամբ զուգորդված զգացողությունները վստահություն են ներշնչում աշխարհի հանդեպ և պահպանվում են ամբողջ կյանքում:

Գեղագիտական դաստիարակությունը բացահայտում է նախադպրոցականի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր որակներ: Այն պետք է ուղղված լինի երեխայի՝ ստեղծագործելու ցանկության արթնացմանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Գեղեցիկ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը: Այն նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը:

Երեխայի գեղագիտական ընկալումը խիստ անհատական է: Դրա հիմքում ընկած է գեղեցիկի նկատմամբ հուզական արձագանքը: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է այն ընկալելու, գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկություն և պահանջմունքի արթացմանը: Երեխաների մտածողությունը դառնում է ավելի ճկուն, նպատակային, երբ նրանք միջավայրը հարմարեցնում են իրենց գործունեության պահանջներին. միջավայրով պայմանավորված՝ հետաքրքիր, գործնական խնդիրները սաներին դարձնում են ավելի կարող, հնարամիտ, գործունյա և անկախ:

Այն բավարարում է երեխայի հետաքրքրությունները, ապահովում նրա անվտանգ և առողջ կենսագործունեությունը:

Երեխաների ուշադրությունը հարկավոր է հրավիրել այն բանի վրա, որ իրենք խաղում և պարապում են մաքուր, լուսավոր, գեղեցիկ կահավորված խմբասենյակում: Զբոսանքի ժամանակ երեխաները պետք է սովորեն տեսնել շրջակա միջավայրի գեղեցկությունը, դիտեն և զննեն մանկապարտեզի տարածքը, տեսնեն ներդաշնակությունը՝ ծաղկանոցի, այգու, խաղահրապարակի միջև:

Քննարկելով երեխայի գեղագիտական դաստիարակության տարբեր դիտարկումները, ինչպես նաև հաշվի առնելով ներկայիս գեղագիտական դաստիարակությանը ներկայացվող պահանջներն ու նախադպրոցականի ուսուցման ժամանակակից տեխնալոգիաներ՝ նշենք դրա հետևյալ առանձնահատկությունները.

1. Գեղագիտական դաստիարակությունը երեխային գեղեցիկը զգալու տալու նպատակաուղղված գործնթաց է:
2. Այն ինչպես արվեստում, այնպես էլ կյանքում ձևավորում է անձի՝ գեղեցիկը տեսնելու և ընկալելու կարողությունները:
3. Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է երեխայի ինքնուրույն ստեղծագործելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը:
4. Այն օժանդակում է նաև մարդու բարոյական որակների ձևավորմանը, հարստացնում է նրա ճանաչողությունը աշխարհի և բնության վերաբերյալ:
5. Գեղագիտական դաստիարակության ուղղվածությամբ պարապմունքները նպաստում են երեխայի մտածողության, երևակայության, կազմակերպվածության, կարգապահության զարգացմանը, հարստացնում նրա հուզազգացմունքային փորձը:

Հետևաբար, գեղագիտական դաստիարակությունն ապահովում է յուրահատուկ կապ կյանքի և արվեստի միջև:

Միաժամանակ այն զարգացնում է երեխայի իրականությունը հուզականորեն ընկալելու, գեղեցիկը նկատելու և արտահայտելու ընդունակությունները:

## Մանկական նկարչության զարգացման փուլերը

Սովորել նկարել ներկելով նշանակում է սովորել տեսնել: Առաջին հայացքից սա թվում է տարօրինակ: Բայց տաղանդի մեծությունը չի կարելի չափել տեսողության սրությամբ՝ դիոպտրիաներով: Նրա տեսողությունը կապված է նրա աշխարհայացքի հետ, նրա կենդանի զգացողությամբ, տեսածի նկատմամբ նրա վերաբերմունքով: Մանկական նկարչությունը պատմում է երեխայի զարգացման ընթացքի, նրա հուզական, մտավոր, ֆիզիկական փորձառության մասին: Անցնում է զարգացման իր յուրահատուկ փուլերը, որոնք համընդհանուր են, իսկ այդ փուլերից շեղումները կարող են հուշել երեխալի զարգացման բնականոն ընթացքի խաթարումների մասին:

Մանկական նկարներում յուրահատուկ կերպով արտացոլվում է երեխայի հոգեբանական զարգացումը: Օրինակ, կրտսեր նախադպրոցական տարիքում երեխաները կոնկրետ բաներ չեն նկարում, նրանք չունեն դրա համար ֆիզիկական, մտավոր համապատասխան ունակություններ: Նրանք նկարում են պարզ ոչ կոնկրետ պատկերներ:

Նկարել սիրում են գրեթե բոլոր երեխաները: Նկարչությունը նրանց համար յուրահատուկ լեզու է: Բոլոր երեխաները ունեն նկարելու ձգտում, դա նրանց համար ոչ թե արվեստ է, այլ ինքնուրույն արտահայտվելու միջոց: Իր բնույթով այն նման է խաղին, հետևաբար երեխայի համար արտահայտվելու, դրսևորվելու առավել հետաքրքիր, հաճելի և բնականոն տարբերակ է: Երեխայի շրջապատի գիտակցումը ավելի արագ է տեղի ունենում, քան բառապաշարի զարգացումը: Իսկ նկարչությունը առավել հեշտ տարբերակն է արտահայտելու այն, ինչ երեխան գիտի իր շրջապատի մասին, այն, ինչ զգում է: Այսինքն, նկարչությունը նպաստում է, որ երեխան ասի այն, ինչ չի կարող ասել խոսքով:

Սակայն, բացի դա նկարչությունը զարգացնող դեր ունի երեխայի համար: Լինելով կապված ձեռքի աշխատանքի հետ՝ նկարչությունը ձեռքը վերածում է խոսքի օրգանի:

Նկարչությունը զարգացնող դեր ունի նաև տեսողության, շարժողական կոորդինացիայի, խոսքի, մտածողության, երևակայության համար: Այն նաև համաձայնեցնում է միջկիսագնդային փոխազդեցությունը:

Այսպիսով, մանկական նկարները մասնագետների համար կարող են ծառայել որպես ախտորոշիչ և թերապևտրիկ միջոց, իսկ առօրյա կյանքում նկարչությունը

նպաստում է երեխայի ընդհանուր զարգացմանը: Մանկական նկարները յուրահատուկ պատմություններ են երեխայի զարգացման, հուզական վիճակի մասին: Եվ, անշուշտ, նկարչությունը պետք է լինի երեխայի առօրյա զբաղմունքների ցանկում:

Մանկական նկարի զարգացման շատ հետազոտողներ ընդգծում են դրա փուլային զարգացումը: Նկարն յուրաքանչյուր փուլում ունի իր առանձնահատկությունները: Յուրաքանչյուր տարիքին համապատասխան ունենում են շրջապատի, աշխարհի սեփական բացահայտումները, և դրանք արտահայտվում են մանկական նկարչության զարգացման հետևյալ փուլերը.

**Խզբզոցի փուլ. 1-3 տարեկան երեխաներ**

Երեխաներին այս փուլում հետաքրքիր է նկարչության ֆիզիկական կողմը: Այս փուլում երեխան բացառապես հաճույք է ստանում ստեղծագործական գործընթացից, իսկ արդյունքը հետաքրքիր չէ: Երեխան սկսում է նկարել անկանոն բծերից, խզբզանքներից՝ բացահայտելով իր հետքը թողնելու հնարավորությունը: Երեխան առաջին փուլում նոր-նոր է իրեն սկսում առանձնացնել շրջակա տարածությունից և ձգտում է հայտնել իր մասին հասանելի բոլոր միջոցներով:

**Նախասխեմատիկ փուլ 3-4 տարեկան երեխաներ**

Երեխաները այս փուլում սկսում են բացահայտել իրենց նկարած պատկերների և արտաքին աշխարհի առարկաների միջև նմանություններ և կապեր: Երեխաները հաճախ նկարում են շրջաններ, գծեր, որոնք նմանեցնում են մարդկանց, կենդանիների կամ այլ առարկաների, որոնք իրենց շրջապատում են: Հաճախ միայն երեխային հասկանալի, թե ինքն ինչ է նկարել: Բնօրինակի հետ նմանությունը նվազագույն աստիճանի է:

**Սխեմատիկ փուլ 5-6 տարեկան երեխաների**

Այս փուլում երեխան սկսում է կոնկրետ պատկերներ անել՝ օգտագործելով երկրաչափական մարմիններ, հստակ տարբերակում է երկինքը հողից: Երկինքը նկարում է կապույտ գծով, իսկ հողը՝ կանաչ գծով: Մնացած օբյեկտները տրոակայվում են կանաչ գծի վրա՝ ի տարբերություն նախորդ փուլի, երբ պատկերները կարծես օդի մեջ լինեն: Նկարները այս փուլում աչքի են ընկնում կառուցվածքով ու կազմակերպվածությամբ: Այս փուլում մանկական նկարներում հայտնվում է մարդը: Դա տեղի է ունենում, երբ երեխան գիտակցում է իր Ես-ը և

սկսում իր մասին խոսել առաջին դեմքով: Մարդու առաջին պատկերները շատ սխեմատիկ են կա միայն գլուխը, ոտքերը և ձեռքերը: Այս փուլում երեխան նկարում է միայն իրեն շրջապատող մարդկանց:

Եվ ընդհանրապես երեխան նկարում է այն, ինչ գիտի, այլ ոչ թե այն, ինչ աչքերի առաջ է, նա նկարում է այն, ինչն իր համար կարևոր է:

Եվ այսպես երեխաներին կարելի է հնարավորություն ընձեռնել նկարել հաճախակի: Նրաց մեջ ստեղծագործելու, փորձարկելու ցանկություն արթնացնելու նպատակով դաստիարակը կարող է.

. խմբասենյակ բերել արվեստի գործեր երեխաների հետ դրանք քննարկելու համար,

. խմբասենյակի պատերից կախել արվեստի հայտնի գործերի պատճեններ,

. մանկական գրականության հերոսների օրինակով անդրադառնալ արվեստի այլ տեսակներին,

. հավաքել բնական առարկաներ և հիշեցնել արվեստում դրանց օգտագործման հնարավորության մասին,

. երեխաների նկարչական աշխատանքները կազմակերպել երաժշտության ուղեկցությամբ:

## 1.2 Կեպարվեստային գործունեության առանձնահատկությունները

Փոքր երեխաների համար գերագույն հաճույք է զբաղվել կերպարվեստային գործունեությամբ: Նման զբաղմունքը երեխային պարգևում է ուրախություն և բեկրանք: Կերպարվեստային գործունեության ընթացքում ունենում է դրական զգացողություններ, ինքնարտահայտման և ինքնադրսևորման հնարավորություն:

Կրտսեր խմբերում կերպարվեստային գործունեության ընթացքում տեղի է ունենում բուռն ճանաչողական զարգացում՝ երեխան ձեռք է բերում առարկայի ձևը զգալու և այն արտաքին աշխարհին փոխանցելու հմտություն:

Ձևավորվում են առարկաների ձևի, գույնի, չափի վերաբերյալ առաջին զգայական կողմնորոշումները, զարգացնում են լսելու, տեսնելու, դիտելու, վերլուծելու ունակությունները: Ձևավորվում են այն մասին, որ մատիտով, վրձնով, յուղամատիտով նկարում են, իսկ ծեփանյութով՝ ծեփում:

Կրտսեր տարիքային խմբում երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել թղթի վրա մատիտով, վրձնով ստացվող գծերի, ուրվագծերի, գույների, պատկերների վրա: Անհրաժեշտ է երեխաներին առաջարկել պատմել այն մասին, թե ի՞նչ են իրենք նկարել և ինչի՞ է նման այն: Պարզագույն առարկաներ և երևույթներ նկարելով՝ երեխան ճանաչում է դրանք, և նրա մեջ ձևավորվում են առաջին պատկերացումները արվեստի ոլորտում: Անհրաժեշտ է, որ երեխան կարողանա տեսնել իրականի և նկարածի միջև նմանություններ և տարբերություններ: Սկզբում նա պետք է աշխատի տաք գույներով, դա օգնում է նրան ուշադիր լինել շրջապատում գտնվող վառ, պայծառ գույներով առարկաների նկատմամբ:

Կերպարվեստային գործունեության ընթացքոում երեխան աստիճանաբար սովորում է գույների, գծերի լեզվով «պատմել» իր տեսածի, զգացածի մասին, ինչպես նաև զարմանք արտահայտել շրջապատի երևույթների վերաբերյալ: Կերպարվեստային գործունեությունը լավ տրամադրության սկզբնաղբյուր է, ուստի անհրաժեշտ է խթանել և զարգացնել հետաքրքրասիրությունը ստեղծագործական աշխատանքի նկատմամբ: Երեխան թղթի վրա արտահայտում է ոչ միայն այն, ինչ տեսնում է շրջապատում, այլ դրսևորում է սեփական երևակայությունը խթանելով ստեղծագործական կարողությունների զարգացում:

Կերպարվեստային գործունեությունը նախադպրոցական երեխաների գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից է: Այն իրականացվում է նկարչության, ապլիկացիայի, ծեփի, կառուցողական նյութերով պարապմունքների գործընթացում: Կերպարվեստային պարապմունքների նպատակն է զարգացնել երեխայի ստեղծագործական և կառուցողական մտածողությունը, գեղագիտական ընկալումները, ինչպես նաև լուծել հետևյալ կարևորագույն խնդիրները.

. սովորել տեսնել, դիտել, զգալ շրջապատող աշխարհը,
. հարստացնել զգայական փորձը՝ տեսողական, լսողական, շոշափելիքի զգացողությունը,
. կարողանալ բնութագրել առարկաները՝ ըստ գույնի, ձևի, չափի,
. կարողանալ նկարներով բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ,
. ծանոթացնել լայնության, բարձրության, մեծության հասկացություններին,
. զարգացնել առարկաները և երևույթները տեսնելու, դիտելու, կատարելու համեմատություններ և վերլուծություններ, դրանց նմանություններն ու տարբերություններն գտնելու, ընդհանրացումներ անելու ունակությունը:

Գույնը կերպարվեստում ունի միջանկյալ շփում բնության հետ և զարգացնում է ելնելով մարդու գեղագիտական պահանջներից: Այդ պայմանականությունների թվին են պատկանում գույնի ֆիզիկական հատկությունը, նրա կախումը մակերևույթից, առարկայի կառուցվածքից և այլն: Ահա թե ինչու է անհրաժեշտ դուրս գալ առարկայի բնական գույների սահմանից՝ պահպանելով նկարչության հատուկ գունային ներդաշնակությունը:

Ընդհանրապես մինչև դպրոց հաճախելն երեխան արդեն պետք է գիտենա, որ բնության մեջ հանդիպում են երեք հիմնական գույներ՝ դեղին, կարմիր և կապույտ: Իսկ իրենց պնակում եղած կանաչը, մանուշակագույնը և նարնջագույնը համապատասխանաբար ստացվում են դեղինի և կապույտի, կարմիրի և կապույտի, դեղինի և կարմիրի խառնուրդներից: Դպրոցական տարիքում արդեն արդեն կարող է

դրան ավելացնել գունային բաղադրությունը իր յոթ գույներով՝ հիմնական գույները և բաղադրյալ գույները:



# Գլուխ 2. Ոչ ավանդական նկարչության նշանակությունն ու նպատակը

## 2.1 Ինչ է իրենից ներկայացնում ոչ ավանդական նկարչությունը

Ոչ ավանդական նկարչությունը նման է արվեստի, որը հիմնված չէ ավանդույթների վրա, հավատարիմ չի դրանց, բայց առանձնանում է իր տեխնիկայով, ինքնատիպությամբ և յուրօրինակությամբ:

Կերպարվեստային պարապմունքների առջև դրված խնդիրները կարելի է իրականացնել նաև ոչ ավանդական նկարչության տարբեր տեխնիկայի միջոցով: Ոչ ավանդական նկարչական գործունեության մեջ երեխան ազատ է նյութերի և միջոցների ընտրության մեջ: Այն հնարավորություն է տալիս ծանոթանալու առարկաների և երևույթների պատկերման ոչ ստանդարտ ձևերին: Աշխատելով տարբեր արտահայտչամիջոցներով գունավորված մատիկներով, ճմռթված թղթով, հաստ վրձնով, փրփրապլաստով, կարտոֆիլով, սպունգով, խցանով, տերևով, օճառի, պղպջակներով, խմորով, մանրաձավարով, ձվի կեղևով և այլ միջոցներով, երեխան տարբեր նյութերի՝ ափսեի, ծառի տերևի, գունավոր կամ սպիտակ թղթի վրա կարող է ստանալ հարթ և անհարթ մակերեսներ: Ձևերի և միջոցների բազմազանությունը ստիպում է փոքրիկին հաղթահարել հանդիպող խոչընդոտները և անընդհատ հորինել ինչ-որ բան: Նկարչության այս տեսակը հնարավորություն է տալիս ընդլայնելու երեխաների պատկերացումները տարբեր նյութերի այլընտրանքային նշանակության և դրանք որպես գեղարվեստական արտահայտամիջոց կիրառելուն:

Կերպարվեստային պարապմունքների ընթացքում կիրառելի են նաև խաղերը և վարժությունները, որոնք ներառում են կերպարվեստային գործունեության բաղադրիչներ: Առաջարկվող խաղ-պարապմունքների նպատակն է՝ օգնել երեխաներին հետաքրքիր ուրախ և աշխույժ մթնոլորտում մասնակցել պարապմունքներին: Անհրաժեշտության դեպքում կարող է կատարել համապատասխան փոփոխություններ:

## 2.2 Ոչ ավանդական նկարչության տեսակները

Երեխաները վաղ տարիքից փորձում են արտացոլել իրենց տպավորությունները շրջապատող աշխարհի իրենց պատկերացումների մասին: Ոչ ավանդական եղանակներով նկարչությունը մանկական երևակայության նոր շրջաններ է բացում: Այս տեղնիկայով նկարելը հետաքրքրաշարժ գործընթաց է, որը զարմացնում և հիացնում է երեխային: Պետք է հաշվի առնել, որ երեխայի համար շատ կարևոր դեր է խաղում զարգացնող միջավայրը:

Ոչ ավանդական նկարչությունը նպաստում է մանկական վախերի վերացմանը, զարգանում է ինքնավստահությունը, տարածական մտածողությունը, սովորեցնում է երեխաներին ազատորեն արտահայտել իրենց միտքը, դրդում է երեխաներին ստեղծագործական որոնումների և լուծումների: Ոչ ավանդական տեխնիկայով նկարելը սովորեցենում է երեխաներին աշխատել տարբեր նյութերի հետ, զարգացնում է կոմպոզիցիայի, ռիթմի, կոլորիտի գունային ընկալման զգացումը: Նաև զարգացնում է ձեռքերի նուրբ շարժունակությանը, ստեղծագործական ընդունակությունները, երևակայությունը: Աշխատանքի ընթացքում երեխաները գեղագիտական հաճույք են ստանում:

Ոչ ավանդական (այլընտրանքային) նկարչությունը բավականին հետաքրքիր և բազմազան նկարչության տեսակ է, այն լինում է հետևյալ տեսակի՝

. հարթ մակերեսով նկարչություն
. անհարթ մակերեսով նկարչություն
. տարբեր միջոցներով նկարչություն

Ոչ ավանդական նկարչությունով զբաղվելիս հարկավոր է պահպանել մի շարք կանոններ՝ աշխատանքային միջավայրը պետք է լինի բարենպաստ, հարմար հագուստ կամ գոգնոց, ներկանյութերի և միջոցների ընտրությունը, պետք է նախորոք ընտրել աշխատատեղը (խմբասենյակ, բակ, տաղավար), ձեռքի տակ ունենալ մաքրող միջոցներ (խոնավ լաթեր, ջուր): Ընտրել նաև ինչ ներկանյութով պետք է աշխատել գուաշ, ջրաներկ, բնական ներկանյութեր, տարբեր չափերի թուղթ, կտոր կամ հարմար պատ աշխատելու համար, ընտրել, թե ինչպիսի միջոցներով է հարկավոր աշխատել՝

մատիկներ, շտամպեր, կավիճ, ձողիկներ, թել և այլ միջոցներ: Կարևոր է պահել նաև սանիտարահիգենիկ նորմերը:

Ոչ ավանդական նկարչության գործընթացում շարունակվում է ուսուցողական և ճանաչողական գործընթացը:

## 2.3 Մատնանկարչություն

### Հարթ մակերեսով նկարչություն

Սպիտակ թղթի վրա գունաներկված ձեռքերի միջոցով կատարվող նկարչությունը ընդունված է անվանել՝ մատնանկարչություն: Այս տիպի նկարչությամբ զբաղվելու ընթացքում ակտիվ են երեխայի երկու ձեռքերը: Նա կարող է նկարել աջ կամ ձախ ձեռքով, ափերով, մատներով: Աշխատաձևի այս տեսակի նպատակն է՝ զարգացնել հետաքրքրասիրություն մատիկների և ձեռքերի միջոցով ստեղծվող պատկերների նկատմամբ: Ձեռքերով, մատիկներով, ափի միջոցով նկարելը կարելի է համարել նկարչության այլընտրանքային ձևերից մեկը, որի շնորհիվ կարելի է յուրովի վերարտադրել առարկաների, երևույթների պատկերները՝ գործի դնելով վառ երևակայությունը:

Ինչու՞ գունաներկված մատիկներով և ոչ թե վրձնով

Ձեռքերով նկարելու գործելակերպը, ի տարբերություն վրձնով ներկելու, երեխաներին ընձեռում է բազմաբովանդակ հնարավորություններ: Գունաներկված մատիկներով ներկելու ընթացքում երեխան ապրում է մեծ ուրախություն, ցնծություն և հրճվանք: Նա ազատ է իր շարժումների, ստացվող պատկերների, հարվածների, քսվածքների, գծերի ուղղությունների ընտրության մեջ: Հետևաբար, երեխային դեռ վաղ տարիքից պետք է հնարավորություն տալ աշխատելու այսպիսի տեխնիկայով: Դա նպաստում, որ երեխան շոշափի և ավելի լավ զգա ներկանյութը, դրա գույնը, փափկությունը: Երբեմն էլ փորձում է հոտ քաշել: Այս դեպքում ակտիվ վիճակում են նրա բոլոր զգայարանները, և դրանց շնորհիվ նա ծանոթանում ու ճանաչում է ներկանյութերի հատկություններին:

**Նկարելու մեթոդիկան**

Նկարչության գաղտնիքները բացահայտելու համար այդ ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է սկսել վաղ տարիքից: Սկզբում երեխան պետք է աշխատի վառ գույներով, քանի որ այն օգնում է ուշադիր լինել շրջապատում գտնվող վառ, ուրախ, տաք գույներով առարկաների նկաատմամբ:

Առաջին երեք պարապմունքներին պետք է աշխատի գունավորված մատիկներով: Դա կարելի է համարել փորձնական խաղ-պարապմունք՝ գունավորված մատիկներով: Երեխան ազատ է իր շարժումների մեջ: 3-5-րդ պարապմունքների

ընթացքում երեխան արդեն ինքնուրույն ընտրում է իրեն ծանոթ գույները (կարմիր, կապույտ, դեղի, կանաչ, նարնջագույն) և մատներով նկարում: Սկզբնական շրջանում պարապմունքները պետք է կազմակերպել անհատական: Երբ յուրաքանչյուր երեխա կտիրապետի այս աշխատաձևին, կարելի է կազմակերպել պարապմունքները զույգերով, ապա՝ խմբերով: Դաստիարակը պետք է բացատրի և ցուցադրի ներկից օգտվելու ճիշտ ձևը՝ այն պետք է լինի ոչ մեծ քանակությամբ և զգուշությամբ դրվելու է թղթի վրա: Մի քանի գույն տեղադրելուց հետո երեխան գունավոր մատիկներով սպիտակ թղթի վրա կատարում է հարվածներ, հպումներ: Իհարկե, այս ամենը պետք է ուղեկցվի դաստիարակի վերահսկողությամբ: Երեխան կարող է աշխատել ինչպես աջ, այնպես էլ ձախ ձեռքով: Այս դեպքում դաստիարակը չպետք է միջամտի, այլ միայն պետք է ուղղորդի: Երեխան գունավորած մատիկներով սպիտակ թղթի վրա աշխատում է մեծ խանդավառությամբ, սիրով ու հաճույքով: Աշխատելու ընթացքում նա ճանաչում է գույները և իր համար բացահայտում դրանցով ստացվող նոր գուներանգները:

Գործողությունների այս ձևը թույլ է տալիս՝

. արթնացնել երեխայի հետաքրքրությունը ստեղծվող պատկերների նկատմամբ,
. զարգացնել ձեռքի մանր մկանները,
. հղկել ձեռքի շարժումները:

Այս գործողության նկատմամբ երեխաների անկեղծ ոգևորությունը և ակտիվությունը բացատրվում է այն հանգամանքով, որ փոքրիկը շարժողական ակտիվության մեծ պահանջ ունի: Այդ պատճառով էլ նա նկարում է հարվածներով, թռիչքներով: Նրանք կարող են նկարել աջից՝ ձախ, վերևից՝ ներքև, կենտրոնից՝ եզր, գծային և գունային խզբզանքներ անել, տանել ուղիղ գծեր: Աշխատելու ընթացքում երեխաները հայտաբերում են, որ թուղթն ունի եզրեր, և չպետք է դուրս գալ այդ եզրերից: Հնարավոր է, որ լավ չներկեն, բաց թողնեն անկյունները, գծերը լինեն միայն ուղղահայաց կամ հորիզոնական: Միևնույն է, աշխատելու ընթացքում երեխաներն ունենում են դրական հույզեր, իսկ աշխատանքի վերջում իրենց բավարարված են զգում, որը խիստ կարևոր հանգամանք է:

Մատնանկարչության համար անհրաժեշտ են առանձնահատուկ պայմաններ և նյութեր.

. աշխատատեղ,

. աշխատանքային հագուստ (գոգնոց),

. թուղթ տարբեր չափերի,

. խոնավ լաթեր,

. գուաշ, ջրաներկեր:

Այսպիսի աշխատանքը կարող է տևել մի քանի րոպե: Երեխային հետաքրքրում է ոչ միայն աշխատանքի ընթացքը, այլև վերջնական տեսքը և դաստիարակի խրախուսական խոսքը: Սակայն ինչպիսին էլ լինի նկարը կամ ստացված պատկերը, միևնույն է, այն երեխայի զգայական ընկալման վերարտադրումն է, որն ուրախություն և հրճվանք է պարգևում հենց իրեն: Երեխան, նույնիսկ մի քանի աշխատանքների մեջ առանձնացնում է իր աշխատանքը և առանձնահատուկ շեշտադրումով ներկայացնում:

## 2.4 Հարթաքանդակային նկարչություն

Ավազով նկարչությունը երեխաների համար համարվում է ամենահետաքրքիր և ամենադեմոկրատ գործունեության տեսակներից մեկը: Ավազով նկարչության համար հարկավոր են մանր ավազով արկղիկ, նախշակաղապարներ, փայտիկներ: Երեխաները սիրով խաղում են ավազով, նրանք մաղում են ավազը, հարթեցնում, դրոշմում նախշակաղապարներով, բուսական պատկերներ, կենդանիների և թռչունների ֆիգուրներ, փորում են թունելներ, կառուցում են տներ, սարեր, բլուրներ: Ավազի վրա նկարչության գործընթացի նպատակն է.

. խթանել երեխայի ստեղծագործական երևակայությունը,
. զարգացնել ձեռքի համարձակ շարժումները,
. ակտիվացնել տարածական մտածողությունը,
. սովորեցնել ավազի վրա փայտիկով պատկերներ ստանալու ձևերը,
. ընդլայնել պատկերացումները ավազի հատկությունների վերաբերյալ:

Չոր ավազի վրա ավելի հեշտ է նկարել, քան խոնավ ավազի վրա, քանի որ խոնավ ավազը ծանրանում է և դժվարացնում է փայտիկով նկարելը:

Աշխույժ և հետաքրքիր խաղ-պարապմունքներ կարելի է կազմակերպել ավազի վրա, և տպավորություններն ամրապնդելու նպատակով անհրաժեշտ է անել դիտումներ, դիտարկումներ, հարցադրումներ: Այսպես՝

. «Ինչպիսի՞ն էր ավազը մինչև նկարելը»:
. « Ինչու՞ փայտիկով նկարել»:
. « Ի՞նչ եղավ ավազի հետ նկարելուց հետո»:
. «Ի՞նչ պատկեր ստացանք»:

Ստանալով ավազի վրա նախշեր, զարդանախշեր, հարթապատկերային և ծավալային շինություններ, երեխան հանդես է գալիս ստեղծողի դերում: Գործունեության այս տեսակի առանձնահատկությունը այն է, որ երեխան հնարավորությունն է ունենում ստացված պատկերներում կատարել փոփոխություններ՝ ուղղել, փոխել, քանդել: Հենց այս գործողությունների շնորհիվ էլ նա ձեռք է բերում անփոխարինելի փորձ և այդ բերած փորձը օգտագործում է առօրյա կյանքում:

## 2.4 Ոչ հարթ մակերեսով նկարչություն

**Նկարչություն աղով**

Աղով նկարչությունը բավականին հետաքրքիր աշխատանք է: Նրանով պատրաստված աշխատանքներն ունեն առանձնահատուկ տեսք և փայլ: Աղով աշխատելու ընթացքում երեխաները ծանոթանում են մանր և խոշոր աղի հատկություններն, խթանվում է հետաքրքրասիրությունը, երևակայությունը, սովորում են թղթի վրա աղամանից աղը հավասարաչափ լցնելու, բամբակե բարձիկով կամ վրձնով այն գունավորելու, գունաներկերով կոկիկ աշխատելու ձևերը: Աղով աշխատանքները կազմակերպելու ընթացքում կենտրոնանում է ուշադրությունը, դաստիարակվում է կոկիկ և համբերատար աշխատելու կարողությունը:

Աղով աշխատելու համար անհրաժեշտ են հետևյալ նյութերն ու միջոցները.

- ալբոմի կամ գունավոր թղթեր,
- գուաշ,
- փոքրիկ թասեր գունաներկերի համար,
- բամբակե բաձիկներ կամ վրձիններ,
- աղամաններ,
- սրվակով սոսինձ,
- անձեռոցիկներ,
- նմուշօրինակներ:

Խոշոր աղով աշխատելու համար օգտագործել սոսինձ, իսկ մանր աղով աշխատելու համար վրձնով խոնավացնել թղթի մակերեսը և աղաամանով աղ անել խոնավ մակերեսի վրա: Աղը գունավորվում է ոչ հավասարաչափ, որի հետևանքով թղթի վրա ստացվում են փայլփլուն պատկերներ: Աշխատանքի այս տեխնիկայով կարելի է պատկերել խոշոր աղով ձմեռային տեսարաններ՝ ձնակույտեր, ձյունիկներ և այլն, իսկ մանր աղով ամպեր, ալիքներ, ծուխ, ձյուն և այլն:

Տպավորություններն ամրապնդելու նպատակով տալ հարցեր.

- «Ի՞նչ կատարվեց խոշոր աղի հետ»:
- «Ի՞նչ կատարվեց մանր աղի հետ»:
- «Ինչո՞ւ աղով և ոչ թե ավազով»:

. «Ինչպիսի՞ն է ստացված պատկերը»:

**Աշխատանքի վերջնական արդյունքը՝**

Ոչ հարթ մակերեսով հետաքրքիր պատկերներ:

## 2.5 Խաղ-զվարճալիքներ

**«Փոքրիկ նկարիչները»**

**Տարիքը՝ 3-4 և ավելի:**

**Նպատակը՝**

. Զարգացնել մոտորիկան:

. Նկարել նախընտրած գույներով և միջոցներով:

. Զարգացնել համարձակությունը թիմային աշխատանքում:

**Անհրաժեշտ պարագաներ**

. երկու նկարակալ մոլբերտ,

. մատիտներ, գուաշ:

**Ընթացքը՝**

Խաղը կազմակերպել խմբասենյակում կամ բակում:

Խումբը բաժանել երկու ենթախմբի: Յուրաքանչյուր ենթախմբի դիմաց մեկ նկարակալ և նկարելու համար այլընտրանքային միջոցներ: Դաստիարակը նկարագրում է խաղը.

Յուրաքանչյուր խմբից մեկ երեխա մոտենում է և նկարում է իր խմբի նկարակալի վրա իր նախընտրած գույներով և միջոցներով՝ մատիտներով, վրձնով, գուաշով, կավիճով: Մի քանի շտրիխ անելուց հետո շարունակում է նկարել իր խմբի հաջորդ երեխան: Խաղին մասնակցում են բոլորը:

Նկարը ավարտելուց հետո փոքրիկ նկարիչները ծափահարում են միմյանց:

**Մեթոդական ցուցումներ՝**

. Նկարելու ընթացքում կարելի է ունկնդրել երաժշտություն:

. Խաղը կրկնել 1-2 անգամ:

Կերպարվեստային խաղ-պարապմունքները ապահովում են երեխաների մասնակցությունը ազատ, անկաշկանդ միջավայրում, ապահովում է երեխայի ակտիվ շփումը տարբեր դիդակտիկ նյութերի հետ: Խաղերում շարունակվում է ուսուցողական և ճանաչողական գործնընթացը: Երեխաները կարողանում են առարկաները տեսնել տարածության մեջ, բնութագրել ըստ գույնի, ձևի, չափի, մեծության, սովորում են բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ՝ բարձր-ցածր, մեծ-փոքր, հեռու-մոտիկ, զարգանում է առարկաները և

երևույթները նայելու, տեսնելու, դիտելու, նմանություններն ու տարբերությունները գտնելու, համեմատություններ և վերլուծություններ անելու կարողություն: Խաղերի միջոցով հարստանում է երեխայի հուզաշխարհը, համակարգվում և ընդլայնվում են ձեռք բերած գիտելիքները, զարգանում է ուշադրությունը, դիտողականությունը. արագ կողմնորոշվելու ունակությունը, ճարպկությունը, նա սկսում է հաղորդակցվել, մտքեր արտահայտել տեսածի, լսածի, զգացածի մասին և դրսևորել համապատասխան վերաբերմունք դրանց նկատմամբ:

Խաղային տարբեր իրավիճակներում երեխան կարող է դրսևորել իրեն որպես կազմակերպված, արագ կողմնորոշվող, ինքնավստահ, համարձակ, համագործակցող անհատ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով ոչ ավանդական նկարչության տեսակները և ձևերը, դրանց ստեղծագործական զարգացումն ու դրսևորումները եկա այն եզրակացության, որ ոչ ավանդական նկարչությունը հետաքրքիր, յուրօրինակ, ակնկալիքներով լեցուն է, որտեղ ձեռքերի, տարբեր պարագաների և նյութերի միջոցով երեխաները արտահայտում են իրենց ներքին աշխարհը, հոգեվիճակն ու տրամադրությունը:

Ոչ ավանդական նկարչությունը երեխային հնարավորություն է տալիս ծանոթանալ տարբեր նյութերի հետ, հաղթահարել բարդույթները, վախերը, քանի որ այս տեսակ նկարչության ընթացքում երեխաների մոտ առաջանում է դրական հույզեր, բարձր տրամադրություն, զվարճանք, ոգևորություն և այլն:

Երեխաները մասնակցելով ոչ ավանդական նկարչության պարապմունքին նկատում եմ, որ այնքան են խորացել իրենց աշխատանքներով, որ կարող են չլսել և շատ հաճախ դժվարությամբ է լինում նրանց կտրել աշխատանքից:

Ոչ ավանդական նկարչությունը ինքնահաստատման միջոց է, որը երեխային թույլ է տալիս լինել ավելի ազատ, ինքնուրույն, ինքնավստահ: Այս տեսակ նկարչությունը երեխային թույլատրում է տեսնել և զգալ գեղեցիկը, զարգացնել վառ երևակայությունը, մտածողությունը, մանր մոտորիկան, աշխատելու ունակությունը և ցանկությունը:

Նախադպրոցական տարիքի երեխաների համար ոչ ավանդական նկարչությունը մեծ հետաքրքրություն է առաջացնում՝ աշխատելով տարբեր նյութերի հետ ձեռք են բերում տարբեր բնույթի հմտություններ և կարողություններ: Այս տեսակ նկարչության տարբերակներն ու միջոցները բազմազան են, կախված մարդու վառ երևակայությունից կարող է նկարչության գործիք և միջոց դառնալ յուրաքանչյուր առարկա և նյութ:

Ցանկացած պարապմունք պետք է զարմանք, հիացմունք, հետաքրքրություն և նորարարություն պարունակի իր մեջ, որտեղ երեխայի համար կլինեն բացահայտումներ և ձեռք կբերի նոր գիտելիքներ: Նմանօրինակ պարապմունքները երեխային թույլ է տալիս ազատ ստեղծագործել և սավառնել արվեստի այս ճյուղի մեջ:

Երեխան կարողանում է ինքնուրույն որոշումներ կայացնել և հասնել վերջնարդյունքի: Աշխատանքի վերջում երեխան դիտելով իր կատարած աշխատանքը տեսնում է հետաքրքիր պատկեր, որտեղ սկսում է մեկնաբանել իր տեսանկյունից:

Ուսումնասիրելով այս նկարչության տեսակը այն տարբերվում է ավանդական նկարչությունից, քանի որ այն բազմազան է, կրկնվող չի, հետաքրքիր է, սահմանափակումներ չունի և պարապմունքը վերածվում է խաղ-զվարճալիքի, իսկ ավանդական նկարչությունը կրկնվող է և կարող է ձանձրալի լինել շատ երեխաների համար:

Այսպիսով, ոչ ավանդական նկարչության նպատակն է երեխաներին ծանոթացնել այլ նկարչության ձևերի հետ, խթանել վառ երևակայության զարգացմանը, ծանոթացնել գունաներկերի հատկություններին, զարգացնել ձեռքի մանր մկանները, ձևավորել որոնողական, ստեղծագործական, հետազոտական կարողությունները: Երեխաները հայտնաբերում են որ իրենց համար նկարչության գործիք կարող է դառնալ ձեռքի տակ գտնվող յուրաքանչյուր իր կամ առարկա:

Հարկավոր է նաև նշել, որ ոչ ավանդական նկարչությունը պետք է կիրառել ամռանը՝ տաք եղանակին, քանի որ այն համարվում է այսպես ասած կեղտոտ (փնթի) աշխատանք և կարևոր է պահպանել հիգենայի և մաքրության նորմերը:

Իմ դիտարկումից պարզվեց, որ ուսումնասիրելով և կիրառելով ոչ ավանդական նկարչության մեթոդը, երեխաները շատ ավելի հաճույքով են աշխատում, քանի որ մատիտի և վրձնի փոխարեն նկարում են իրենց ձեռքերով, մատիկներով, անգամ ոտիկներով և այս ամենը նրանց հաճույք և զվարճանք է պարգևում:

**Ոչ ավանդական նկրչության պարապմունքների տեսակներ:**

Նկարում են իմ խմբի երեխաները՝ կրտսեր 2-րդ խումբ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ժ. Ավետիսյան, Գ. Փոթիկյան, «Ոչ ավանդական նկարչություն» Էդիթ Պրինտ 2020թ.
2. Ժ.Ավետիսյան, Գ.Փոթիկյան, «Կերպարվեստային դիդակտիկ խաղ-պարապմունքներ» Էդիթ Պրինտ 2020թ.
3. Լ. Սմբատյան, Լ. Վերդյան, Լ. Սարգսյան, «Կերպարվեստի պարապմունքներ» Կրտսեր առաջին և կրտսեր երկրորդ խմբերի համար (2-3 տարեկան)
4. Լ. Ս. Ներսիսյան «Կերպարվեստ և գեղարվեստական աշխատանք» Երևան, 2004թ.
5. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես